

## ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԸ ԵՎ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆՂԵՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԾՐՋԱՆԸ

### *Վաչագան Ավագյան*

Արշակ Չոպանյանի խմբագրած ազգային, գրական-գեղարվեստական «Անահիտ» հանդեսը, հիրավի, բացառիկ նշանակություն է ունեցել հայ պատմամշակութային կյանքի տարեգրության մեջ: Շուրջ երեսուն տարի լինելով ասպարեզում՝ պարբերականը անփոխարինելի դեր է խաղացել հայ մշակույթի, գրականության և գեղարվեստի զարգացման գործում, մեծապես նպաստել հայ ու եվրոպական ժողովուրդների գրական կապերի ամրապնդմանը, Հայ դատի պաշտպանությանը, արևմտահայ և արևելահայ, իսկ հետագայում Սփյուռքի և Խորհրդային Հայաստանի հասարակական-մշակութային առնչությունների առաջընթացին ու զորացմանը և հայ պարբերական մամուլի հարուստ պատմության մեջ գրավել է իր կայուն և առաջնակարգ տեղը: Հանդեսի հրատարակությունը, ինչպես հայտնի է, սկսվել է 1898 թ. Փարիզում և երկար ու համեմատաբար կարճատև ընդհատումներով շարունակվել մինչև 1949 թ.: Այն ունեցել է հրատարակության երկու շրջան. առաջինը՝ 1898-1911 թթ., և երկրորդը՝ 1929-1941 ու 1946-1949 թթ.: Վերջին համարը ընդգրկում է 1949 թ. առաջին կիսամյակը:

Սակայն եթե «Անահիտի» առաջին շրջանի գործունեությունը դարձել է առանձին հետազոտության նյութ<sup>1</sup>, ապա հանդեսի երկրորդ շրջանը հատուկ ուսումնասիրության առարկա դեռ չի եղել: Մենք փորձ ենք արել ներկայացնել «Անահիտի» գործունեության երկրորդ շրջանի հիմնական կողմերը, տալ նրա ազգային-հասարակական ու գեղագիտական գնահատականը, ինչպես նաև տեսանելի դարձնել հանդեսի խմբագրատի՝ այդ ժամանակաշրջանի այլազան գործունեությանը վերաբերող տարբեր դրվագներն ու էջերը:

\*\*\*

1911 թ. նյութական միջոցների պակասը և մանավանդ առաջ եկած նյարդային հիվանդությունը ստիպեցին Ա. Չոպանյանին դադարեցնել

<sup>1</sup> Տե՛ս Յու. Ավետիսյան., «Անահիտ» հանդեսը», Երևան, 1999, 228 էջ:

«Անահիտի» հրատարակությունը<sup>1</sup>, որը հոգեկան մեծ ցավ պատճառեց նրան: Թվում է, թե բազմաթիվ նպատակներ մնացին անկատար, մեծաքանակ ծրագրեր՝ կիսատ: Բայց ահա արդեն 1928 թվականի վերջերից Ա. Չոպանյանը գործնական նախապատրաստական աշխատանքներ է տանում «Անահիտ» հանդեսի վերահրատարակության ուղղությամբ<sup>2</sup> նպատակ ունենալով շարունակելու նախորդ շրջանի գրական-ծրագրային ավանդները, վերածնելու նոր ժամանակների ազգային-գրական կյանքի ընթացքը: 1929 թ. սկզբին նա Ռամկավար ազատական կուսակցության՝ Եգիպտոսում հրատարակվող «Արեւ» պաշտոնաթերթում, որին աշխատակցում էր պարբերաբար, մի հայտարարություն տպագրեց «Անահիտի» նոր շրջանի վերսկսման մասին, որում, ըստ էության, շարադրեց իր նպատակադրումներն ու մղումները, ներկայացրեց հրատարակության ծրագիրն ու դրույթները<sup>3</sup>:

Եվ ահա շուրջ տասնութ տարիների երկար ընմիջումից հետո՝ 1929 թ. մայիսին, հրատարակվեց նոր «Անահիտի» առաջին համարը:

Իսկ ինչպիսի՞ն էր այդժամ հայ ժողովրդի, մասնավորապես արևմտահայության վիճակը: Մի կարճ ակնարկ նետելով պատմական մոտ անցյալի համաշխարհային իրադարձությունների, դրանց հետևանքների և ներկա իրողությունների պատկերի վրա՝ Չոպանյանը դառնությամբ գրում է. «Աշխարհը հիանդ է: ...Բարոյական ընդհանուր անկում կայ»<sup>4</sup>: Քաղաքական անհաստատ, «վատախտարակ» (Ա. Չոպանյան) պատմական այս շրջանում արևմտահայության մեծ մասը, ցրված աշխարհով մեկ, տարագրության մեջ իր համար ստեղծված նոր իրավիճակում ապրում էր անհանգստություն, եթե չասենք տագնապ: Կար ինքնապահպանության ծանր ու բարդ խնդիրը: Եվ եթե շատերը, արդեն հուսալքված ու մռայլ, հաշտվել էին վերջնական անկմանն ու ուժացմանը, Չոպանյանը չկորցրեց իր լավատեսությունը, տեսավ ու գտավ «յուսադրիչ, ոգեւորիչ, սրտապնդիչ քանի մը կէտեր», որոնք կապահովեին մեր ժողովրդի հե-

<sup>1</sup> Տե՛ս **Կ. Դալլաքյան**, Արշակ Չոպանյան. կյանքը և գործը, Երևան, 1987, էջ 292:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 414:

<sup>3</sup> Տե՛ս **Ա. Չոպանեան**, «Անահիտ» հանդեսին նոր շրջանը, «Արեւ», Կահիրե, 1929, թիւ 3036, էջ 2, թիւ 3037, էջ 2:

<sup>4</sup> **Ա. Չոպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 159:

տագա գոյությունը<sup>1</sup>: Նոր «Անահիտի» առաջին համարում՝ «Յեղին կոչումը» խորագիրը կրող առաջնորդում, լրացնելով ու զարգացնելով արդեն «Արեւից» ծանոթ ծրագրային դրույթները, Չոպանյանը սահմանեց հանդեսի նպատակն ու բովանդակությունը: Մեր ժողովրդի համար բազմաթիվ առանձնահատկությունների համեմատ առավել ընդհանրականն ու տևականը համարելով նրա աշխատասիրությունն ու հնարամտությունը, մանավանդ մտավորական ձիրքը՝ Չոպանյանը գտնում է, որ հենց այստեղ պետք է փնտրել ու տեսնել հայ ցեղի մեծությունը<sup>2</sup>: Նա ընդառաջ է գալիս տարածական այն մտայնությանը, թե անկախության կորստից հետո հայ ազգությունը պահպանող գլխավոր ուժը դարձել է մեր ազգային Եկեղեցին<sup>3</sup>, սակայն այն ճշմարիտ ընկալմամբ, որ Եկեղեցին եղել է մեր ազգային մշակույթի խտացումը, ազգային գիտակցության այն կարևոր միջնաբերդը, որ իր գրողներով, ճարտասաններով, գիտուններով ու արվեստագետներով պահպանել է սերը հայրենի հողի ու ավանդույթների հանդեպ: Ազգային ինքնավարությունից դարերով այրիացած մեր ժողովրդի համար Չոպանյանը մասնավորապես մշակույթն է տեսնում այն թանկագին ու առանցքային լծակը, որը ապահովել է մեր ժողովրդի ինքնուրույնության դիմագիծը, այն էական գործոնը, որ կենսունակություն է հաղորդել ազգային իղձերին: «Մշակույթը հոգին է ազգերուն»<sup>4</sup>, - իրավացիորեն գտնում է նա՝ համոզված, որ թվով ու քաղաքական կարողություններով փոքր ազգերը իրենց ծնած սեփական հանճարների շնորհիվ, ինչպես փաստում է նրանցից շատերի պատմությունը, դարձել են զորեղ ու մնայուն: Երբեք չի կարելի վիճարկել այն ազգի գոյությունն ու ապագան, որը ընդունակ է ծնելու հանճարներ, գրական-գիտական տաղանդներ: Սակայն կա մի կարևոր նախապայման. երբեք չխզել կապերը անցյալի հետ: Այստեղից էլ բխում էր Չոպանյանի, ըստ էության, հերթական ու արդեն ծանոթ ծրագրային դրույթը, որը հնչում է որպես պատգամ հայության բոլոր սերունդներին. «Ճանչցնե՛նք ճշգրտորեն մեր նոր սերունդին ինչ որ մեր հին նախահայրերն ըրեր են քաղաքակր-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 161:

<sup>2</sup> Տե՛ս **Ա. Չոպանեան**, Յեղին կոչումը, «Անահիտ», Փարիզ, 1929, թիւ 1, էջ 1-2:

<sup>3</sup> Նույն միտքը տե՛ս նաև **Ա. Չոպանեան**, Տպաւորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932-1933, թիւ 3-6, էջ 94:

<sup>4</sup> **Ա. Չոպանեան**, Յեղին կոչումը, «Անահիտ», Փարիզ, 1929, թիւ 1, էջ 5:

թութեան համար... զօրացնե՛նք մեր երիտասարդութեան մէջ իր հաւատ-  
քը ցեղին արժէքին վրայ, մղե՛նք զայն սիրել իր ցեղը՝ իբր մարդկութեան  
մտաւոր ուժերէն մին...»<sup>1</sup>:

\*\*\*

Ինչպես նախկինում, այնպես էլ նոր շրջանում «Անահիտը» անկախ  
հրատարակություն էր՝ առանց կուսակցական ինչ-որ ընդգծված գաղա-  
փարախոսության. «Ազգին շահը կուսակցութեան շահէն վեր դնել  
միշտ»<sup>2</sup>, - այս էր Չոպանյանի նշանաբանը: Իսկ սա նշանակում էր, որ  
նրա համար ազգը ավելի լայն հասկացություն էր, քան այս կամ այն կու-  
սակցությունը կամ նրա գաղափարաբանությունը:

Որպես ավանդույթ՝ հանդեսի տարբեր հոդվածաշարերում պարբե-  
րաբար տեղեկություններին էին տրվում Հայաստանի, նրա աշխարհագ-  
րության, տեղանքների, քաղաքների, ճարտարապետական տարբեր կա-  
ռույցների ու կոթողների մասին, ինչպես նաև հայաստանյան մշակու-  
թային կյանքի, ամենատարբեր միջոցառումների, արվեստի այս կամ այն  
գործչի գործունեության, նորատիպ հրատարակությունների ու ստեղծա-  
գործությունների վերաբերյալ, ներկայացվում էին Հայաստանում տեղի  
ունեցող տնտեսական վերափոխումները, իսկ ինքը՝ խմբագիրը, իր նա-  
խասիրած լրագրային ժանրում՝ քրոնիկներում, Խորհրդային Հայաստա-  
նին նվիրված հատուկ բաժիններ ուներ, որոնցում իրեն հատուկ գեղեցիկ  
ու գունագեղ ոճով գրում, պատմում էր երկրի մտավոր կյանքի, գիտա-  
կան նորաստեղծ գլխավոր հաստատությունների, կրթական, գրական-  
գեղարվեստական մարզերում կատարված գործերի, հայտնված էական  
երևույթների ու նաև հոգսերի մասին:

Խորհրդային Հայաստանի իրականության գնահատության հարցում  
Չոպանյանի գնահատականները առավել առարկայական ու շոշափելի  
դարձան, երբ 1932 թվականի աշնանը նա՝ որպես Լիոնի ազգային գա-  
վառական խորհրդի պատգամավոր, ընտրված էջմիածնի ազգային-եկե-  
ղեցական ժողովի կազմում, եկավ հայրենիք՝ մասնակցելու Հայոց հայ-  
րապետի, ինչպես և գերագույն հոգևոր խորհրդի ընտրությանը: Շուրջ  
մեկ ամիս մնալով Երևանում և վայելելով մտերիմների ջերմ ընկերակցու-  
թյունը՝ Չոպանյանը, չթաքցնելով իր հրճվանքը հայրենիքում տեղի ունե-

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 6-7:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Չոպանեան, Մեր երէկն ու այսօրը, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 8:

ցած «մեծ գործերի» կապակցությամբ<sup>1</sup>, կարոտը սրտում, երբևէ վերադառնալու հույսով թողեց Երևանը և Թիֆլիսով մեկնեց Փարիզ<sup>2</sup>: Ականատեսի աչքով տեսնելով այն ամենը, ինչ կատարվել էր միակ կենդանի բնօրրանում, «անոր բարին ու չարը ձեռքովս շօշափելով, - ինչպես ինքն է ասում,- անոր լոյսն ու ստուերները անձամբ դիտելով»<sup>3</sup>, նա ոգևորված գրում է. «...աւելի քան երբեք համոզուեցայ թէ այդ երկիրը իրական Հայաստան է, «Հայ ինքնավար Պետութիւն» է...»<sup>4</sup>:

Խորհրդային Հայաստանից ստացած իր տպավորությունների հրատարակությունը «Անահիտում» շարունակաբար տևում է շուրջ երեք տարի:

\*\*\*

Ինչպես հրատարակության առաջին շրջանում, այնպես էլ երկրորդում «Անահիտի» ուշադրության կենտրոնում գրականության հարցերն էին: Գրական հետաքրքրությունների շրջանակը հանդեսում, պետք է ասել, շատ լայն էր: Առանցքում, անշուշտ, ունենալով հայ ժողովրդի ազգային-գեղարվեստական նկարագիրը ներկայացնող հին ու նոր արժեքավոր ստեղծագործությունների տպագրումն ու գնահատումը՝ Չոպանյանը զուգահեռաբար ձգտում էր ընդարձակել ազգային մշակույթի զարգացման սահմանները. «Գրականութիւն, արուեստ,- ահա՛ մեծ, անդիմադրելի ու բարերար միութեան գծերը՝ բոլոր ազգերու միջև»<sup>5</sup>, - գրում է նա: Առաջնորդվելով այս հայեցակետով՝ նոր «Անահիտի» խմբագիրը հանդեսի էջերում պարբերապես թարգմանաբար տպագրում է համաշխարհային գրականության կոթողներից՝ որպես արևելյան, այնպես էլ եվրոպական հին ու նոր հեղինակների գործերից:

Դնելով արևելյան դասական արժեքների յուրացման, ինչպես նաև մերը թարգմանաբար նրանց ներկայացնելու պահանջը՝ Չոպանյանը այստեղ, կարծում ենք, հետապնդում էր լրացուցիչ, թերևս ոչ պակաս կարևոր մի նպատակ, քան կարող էր լինել սուկ արևելյան մշակույթի,

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Չոպանեան**, Տպաւորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Գ., «Անահիտ», Փարիզ, 1934, թիւ 5-6, էջ 62-63:

<sup>2</sup> Տե՛ս **Ա. Չոպանեան**, Տպաւորութիւններ եւ յիշատակներ Խորհրդային Հայաստանէն. Ա., «Անահիտ», Փարիզ, 1932-1933, թիւ 3-6, էջ 78:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 79:

<sup>4</sup> Նոյն տեղում:

<sup>5</sup> **Ա. Չոպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, թիւ 1, էջ 100:

մասնավորապես թուրքական ու պարսից գրականությունների ճանաչումը կամ նրանց հետ համեմատվելու հնարավորությունը. ցույց տալ հայ գեղարվեստի ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը արևելյան միջավայրում, համոզել, որ այն սերում է ազգային ակունքներից և ունի տոհմիկ առանձնակի յուրակերպություն: Հարցի էությունը ավելի պարզ է դառնում, երբ տեսնում ենք, թե ինչպես է Չոպանյանը բանակոչվել տալիս հատկապես այն թուրք կարծեցյալ արվեստաբանների դեմ, որոնք փորձում ու ջանում էին հայկականը սեփականացնել, ինչպես, օրինակ, Օսմանյան համալսարանի թուրք գրականության պատմության ոմն դասախոս, որ, հայ ժողովրդական երգերին ու միջնադարյան հայ աշուղական բանաստեղծություններին ծանոթանալով միայն Չոպանյանի ֆրանսերեն թարգմանությունների հատորներից, սկսել էր հողվածներ տպագրել հայ-թուրքական գրականության փոխադարձ հարաբերությունների մասին՝ ընթերցողին ձգտելով բերել այն արտառոց, բայց իշխող եզրակացությանը, թե իբր «Հայ բանաստեղծությունը պարզապես հետետողութիւն մըն է թրքականին»<sup>1</sup>: Թուրքերը, որ Գևորգ Թերզիպաշյանի՝ Ֆիզուլիին նվիրված ուսումնասիրության շնորհիվ էին ճանաչել միջնադարի մեծ գրողին և սկսել հետաքրքրվել նրանով, շտապել էին ոչ միայն սեփականացնել նրան, այլև «հայտնաբերել» նրա ազդեցությունը հայ միջնադարյան տաղերգության վրա: Եթե այս հարցերում Չոպանյանը իր գնահատականներում դեռ զուսպ է, պահանջ է տեսնում հանգամանորեն ուսումնասիրելու փոխադարձ ազդեցությունների չափը, որոշելու ժամանակն ու հանգամանքերը, ապա նրա խոսքը շատ կրքոտ է դառնում ո՛չ միայն թուրք մտավորական շրջաններում հայտնի գրող, մոլեռանդ ազգայնական, հասարակական գործիչ Խալիտե Էտիպ հանըմի դեմ: Վերջինս Ամերիկայում տված իր մի բանախոսության մեջ թեև խանդավառորեն գովել էր Կոմիտաս Վարդապետի երաժշտական հանճարը, սակայն նրան ծագումով համարել էր թուրք, իսկ նրա երգած եղանակները՝ թուրքական արվեստի գործեր: Նման գնահատականը Չոպանյանը իրավացիորեն համարում է անպատկառ խարդախություն, միաժամանակ Ամերիկայի անգլիագետ հայ մտավորականներին նախատում այն բանի համար, որ նրանցից ոչ մեկը հարկ չի համարել հերքել այդ «լկտի խեղաթիրումը» և ցույց տալ, որ Կոմիտասը ոչ միայն թուրք չէ, իսկ նրա երաժշտությունը՝

<sup>1</sup> Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1930, թիւ 6, էջ 103:

թուրքական, այլև Վարդապետը աշխատել է հայ բնիկ երգը ազատել թուրքական ազդեցությունից՝ նրան վերադարձնելով իր հին ու անաղարտ տեսքը<sup>1</sup>:

Թուրքերի՝ հայ մշակույթի նկատմամբ ոտնձգության փորձերը բնավ էլ պատահական չէին կամ միամիտ ենթադրությունների հետևանք: Դրանք, անշուշտ, հետապնդում էին որոշակի նպատակ, որը ներդաշնակ էր գալիս նրանց՝ ժամանակի ու հեռակա քաղաքական մտադրություններին՝ ոչնչացնել հայկական մշակութային դիմագիծն ու ինքնատիպությունը, որը հետզհետե կբերեր ազգային մտածողության ուժացմանն ու վերացմանը: Ուրեմն, ինչպես համոզվում ենք, Չոպանյանի համար արևելյան մշակույթի հետ ծանոթացումը չէր հետապնդում բացառապես ճանաչողական, բանասիրական, գիտական հետաքրքրությունների դիտավորություն, այլև ուներ ազգային-հայրենասիրական գաղափարաբանություն:

Ընդհանրապես նկատելի է, որ անցյալի հայ գեղարվեստական այլազան արժեքներում, օրինակ, մանրանկարչություն, զարդարվեստ, երաժշտություն, ճարտարապետություն և այլն, Չոպանյանը ձգտում էր հայտնաբերել և տեսանելի դարձնել բուն հայկական ոճի, ճաշակի, գծի ու գույնի առկայությունը, մասնավորապես արևելյան միջավայրում ընդգծել մեր ցեղային դրոշմի ինքնատիպությունը, որը իր ազդեցությունն է գործել անգամ համաշխարհային մշակույթի վրա:

Ուշագրավ է նաև «Անահիտի» վերաբերմունքը ռուս գրականության նկատմամբ, որի ձեռքբերումներով դարձյալ Չոպանյանը ձգտում էր հարստացնել հայ գեղարվեստական մտածողությունը, ընդլայնել մասնավորապես արևմտահայ ընթերցողի հետաքրքրությունների շրջանակը:

\*\*\*

«Անահիտի» նախորդ շրջանի ավանդների լավագույն շարունակությունն էր նաև հայ գրական արժեքների հրատարակումն ու գնահատումը, որի շրջանակում կարևորվում էր նաև նոր սերնդի ծանոթացումը հայ հին գրականությանը: Շարունակելով հրատարակել միջնադարյան մեր հեղինակների զմայլելի բանաստեղծությունները՝ Չոպանյանը նպատակ ուներ հայ արդի գրական միտքը հաղորդակցության մեջ դնել իր անցյա-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Չոպանյան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1932, թիւ 5-6, էջ 184-185:

լի հետ, իսկ անցյալի գրական այդ ժառանգությանը գրականագետի տված գիտական մեկնաբանություններն ու բացատրությունները պայմանավորված էին դարձյալ ազգային բանաստեղծական ավանդների ու արժանատիների բացահայտման ձգտմամբ:

Հանդեսի տարբեր տարիների զանազան համարներում պարբերաբար տպագրվում են միջնադարյան հայ հեղինակների հիմնականում դեռ անծանոթ ու անտիպ ստեղծագործություններ՝ ավելի հաճախ Ա. Չոպանյանի աշխարհաբար փոխադրություններով և ծանոթագրություններով: Էական տեղ է հատկացվում նաև պատմական հիշյալ շրջանի մատենագիրների ու տաղերգուների գործերի ուսումնասիրությանը:

Պետք է ասել, որ հայոց անցյալի գրական ժառանգության գնահատումներում Չոպանյանին գիտական, պատմաբանասիրական, ազգագրական խնդիրներից առավել հետաքրքրում էին միջնադարյան գրականության գեղարվեստական-բանաստեղծական արժանիքներն ու ստեղծագործական անուրանալի շնորհները՝ իբրև իսկական ու ճշմարիտ գրական արտահայտություններ: Գեղագետ Չոպանյանի համար Խորենացին առաջին հերթին հայ տոհմիկ դպրության պատմության մեջ արձակ բանաստեղծության մեծագույն ներկայացուցիչն է՝ «իր քնարերգական էջերէն ոմանց մէջ («Վարդավառի ճառ») նարեկացիական ոճին իսկ նկարագիծը արդէն տուած»<sup>1</sup>: Ֆրիկի բանաստեղծության մեջ ընդգծվում է «յանդգնող», «բողոքական ոգիի մեծութիւնը», իսկ Հ. Երզնկացու ստեղծագործություններից առանձնացվում են հատկապես նրանք, որ գրված են «Ժողովրդական քնարին հետետողութամբ», ունեն «թէ՛ հայրենաշունչ եւ թէ՛ անձնադրոշմ» կնիք<sup>2</sup>:

\*\*\*

Գեղագիտական նույն մոտեցմամբ են վերլուծվում և գնահատվում նաև հայ նոր գրականության ու ժամանակակից հեղինակների ստեղծագործությունները: «Անահիտի» երկրորդ շրջանում լայն տեղ է տրամադրվում թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ դեմքերին, և դա ամենևին պատահական չէր, ինչպես և նախկինում էր՝ ժամանակակից իմաստով Սփյուռքի գոյացումից դեռ շատ տարիներ առաջ: Ներկա ժամանակներ

<sup>1</sup> Ա. Չոպանյան, Գրագետն ու մարդը Մովսէս Խորենացին մէջ, «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 10:

<sup>2</sup> Ա. Չոպանյան, Յովհաննէս Երզնկացի, «Անահիտ», Փարիզ, 1940, թիւ 1-2, էջ 6:



րում պակաս կարևոր չէր մտավոր-գրական փոխառնչությունների և փոխանցումների շարունակությունը աշխարհով մեկ ցրված հայության մեջ:

Հանդեսի էջերում, բացի հեղինակային նյութերի արտատպումից, հանդիպում են նաև անտիպ, հետաքրքիր բովանդակությամբ բանախոսություններ, նամակներ, որոնք ոչ միայն ուրվագծում են կողմերի տարբեր հարաբերություններ, այլև հաճախ բացահայտում են նրանց գործունեության անձանոթ եզրեր:

Ա. Չոպանյանը՝ ինքը ևս պարբերահանդեսում ևս հրապարակում էր նոր գրականության պատմությանը վերաբերող հոդվածներ, որոնցից հատկապես ուշադրության են արժանի Րաֆֆուն, Ավ. Իսահակյանին նվիրված ուսումնասիրությունները:

Գնահատելով, օրինակ, Րաֆֆու ստեղծագործական ժառանգության գրական-պատմական նշանակությունը՝ Չոպանյանը շատ բարձր է գնահատում հատկապես գրողի գործի ազատատենչ ու մարտասեր ոգին, ներշնչման ու ոգևորման հզոր ուժը և վերջինիս՝ սերունդների վրա թողած մեծ ազդեցությունը<sup>1</sup>: Իսկ Իսահակյանի օրինակով Չոպանյանը ևս մեկ անգամ հաստատում է, որ հայ բանաստեղծությունը հին ժամանակներից մինչև ներկա օրերը եղել է մեր ազգի մեծ փառքերից, նրա հոգեկան զորության շքեղագույն պողպատներից մեկը: Այն միշտ մեր ժողովրդին արժանապատվորեն կանգնեցրել է աշխարհի մեծ ազգերի կողքին<sup>2</sup>:

\*\*\*

Նոր «Անահիտի» էջերում արտացոլվեց նաև հայոց ընթացիկ գրական կյանքը իր բոլոր էական ու բնութագրական կողմերով: Նրա էջերում հյուրընկալվեցին բազմաթիվ ինչպես արդեն մոտ անցյալից հայտնի ու անվանի, արդեն դասական դարձած, այնպես էլ դեռատի թե՛ սիյուռքահայ և թե՛ խորհրդահայ սկսնակ գրողներ:

Վերապրող սերնդից ավելի հաճախ «Անահիտի» գրեթե ամեն համարում երևում են բանաստեղծություններ Վահան Թեքեյանից: Դեռ «Ծաղիկից», որտեղ Թեքեյանը հաճույք էր վայելել՝ տեսնելու իր հրատա-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Չոպանեան, Րաֆֆի, «Անահիտ», Փարիզ, 1937, թիւ 5-6, էջ 45:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Չոպանեան, Դէմքեր. Աւետիք Իսահակեան, «Անահիտ», Փարիզ, 1936, թիւ 4, էջ 49:

րակված առաջնեկը<sup>1</sup>, Չոպանյանը հետևում էր բանաստեղծի ստեղծագործական կենսագրությանը՝ «Անահիտի» նախորդ շրջանում ևս պարբերաբար տպագրելով նրա գործերից: Մի փոքր հետ գնալով՝ հիշենք, որ դեռևս 1902 թվականին Չոպանյանը գրախոսական էր տպագրել «Հոգերի» առիթով, ցույց տվել Թեքեյանի ստեղծագործական խառնվածքի ինքնատիպ կողմերը, բացահայտել բանաստեղծի գեղարվեստական աշխարհի ներքին միասնությունը, ընդգծել մտածողության այն հիմնական ուղղությունը, որի վրա խարսխվում էին նրա անհատականությունը, գեղագիտական իդեալը<sup>2</sup>: Այժմ՝ նոր ժամանակներում՝ 1933 թ. աշնանը, ոգևորված բանաստեղծի գրական գործունեության 40-ամյա հորեյանի տոնակատարման նախաձեռնությամբ<sup>3</sup>, նրան համարում է «մեր ժամանակակից քերթութեան ամենէն հմայիչ, ինքնատիպ ու կատարելաձև վարպետներէն մին»<sup>4</sup>, իսկ նրա նորատիպ «Սէր» ժողովածուի կապակցությամբ գրում. «Բարձր բանաստեղծութիւն սիրող ամէն Հայ պէտք է այդ հատորն ունենայ իր գրադարանին մէջ, կամ աւելի ճիշդը՝ իր սնարին մոտիկ»<sup>5</sup>:

Ի՞նչ ճանապարհով պիտի ընթանար Սփյուռքի գրականությունը: Ըմբռնելով, որ տոհմիկ արմատներից կտրված, անցյալը մոռացած ու միայն ներկա հոգսերով ապրող գրականությունը վաղ թե ուշ, որքան էլ ուժեղ լինի, կորցնելու է ազգային դիմագիծը՝ Չոպանյանը առաջարկում էր հավատարիմ մնալ անցյալի գրական արժեքներին ու ավանդույթներին, խորապես ճանաչելով ու սիրելով մեր հին գրողներին ու նրանց գործերը՝ զարգացնել հայ մշակույթը<sup>6</sup>: Առաջնային կարևորություն էր տրվում նաև արևմտահայ լեզվի կենսունակության ապահովմանը:

1930-ական թվականների սկզբներին սփյուռքահայ գրականությունը, աղետալի իրողությունների վերքերի դեռ չսպիացած ցավը հիշողու-

<sup>1</sup> Տե՛ս **Կ. Դալլաքյան**, նշվ. աշխ., էջ 65:

<sup>2</sup> Տե՛ս **Ա. Չոպանեան**, «Անահիտ», Գրքեր եւ թերթեր, Փարիզ, 1902, թիւ 3, էջ 45-50:

<sup>3</sup> Տոնակատարությունը տեղի է ունեցել 1934 թ. փետրվարի 10-ին Փարիզի Սալ Գովոում, տե՛ս **Ա. Չոպանեան**, Վահան Թեքեյան. Ճառ՝ բանաստեղծին յոթելեանական հանդէսին արտասանուած, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 3-4, էջ 109-111:

<sup>4</sup> **Ա. Չոպանեան**, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1933, թիւ 1-2, էջ 61-62:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 66-67:

<sup>6</sup> Տե՛ս նաև **ժ. Քալանթարյան**, Ա. Չոպանյանը սփյուռքահայ գրականության քննադատ, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1989, № 3, էջ 27:

թյան մեջ, տվեց, սակայն, ոչ միայն ջարդերի, մահվան սարսափների, արհավիրքի հոգեբանական ապրումի, գաղթի, պանդխտության, անորոշ ու անսփոփելի կացության պատկերներ, այլև ավելի հաճախ հնչեցրեց հույսի, փրկության, մաքառման ու հավատի երգը: Սա, անշուշտ, նաև հանդեսի խմբագրի հետևողական քաղաքականության դրսևորման արդյունք էր՝ «Անահիտի» գեղարվեստական էջերով ժողովրդին, մանավորապես սփյուռքահայությանը վարակել պայքարի, համառության, դիմադրության անսպառ ուժով, նրան ներարկել հայրենասիրական, ազգապահպան հերոսական ոգի ու տրամադրություն: «Մեր գրականութիւնը արտասահմանի մէջ վերափոթումի շրջան մը թեւակոխած է»<sup>1</sup>, - 1932 թ. հունվար-հունիսյան համարում գրում է Չոպանյանը, և ինքն էլ ոգեշնչված հայ գրականության զարթոնքով՝ ընթերցողին ձգտում համակել աներեր լավատեսությամբ:

Գրականության մեջ կյանքը հաստատող լավատեսական տրամադրությունների գերակշռության պահանջին զուգահեռ Չոպանյանը մեծ կարևորություն էր տալիս նաև սփյուռքահայության՝ Խորի. Հայաստանի նկատմամբ նվիրվածության թեմաների արտահայտությանը և ընդհանրապես հայրենիքի հզորացման ու զարգացման համազգային գործին սեփական նպաստը բերելու անհրաժեշտությանը, որը դարձյալ «Անահիտի» բնութագրական կողմերից մեկն էր<sup>2</sup>:

«Անահիտը» բացառիկ դեր կատարեց ոչ միայն նոր սերնդի, իհարկե, ոչ միշտ տաղանդավոր հեղինակների ստեղծագործությունները իր էջերում տպագրելով, այլև շատ հաճախ, առջևում ունենալով մասնավորապես սկսնակների գեղագիտական դաստիարակության հարկավորությունը, ինչպես նաև ընթացիկ գրականության առանցքային խնդիրների ըմբռնման պահանջը, հանդես եկավ քննադատական վերլուծություններով ու գնահատումներով: Այս ասպարեզում դարձյալ մեծ է Ա. Չոպանյանի դերն ու ավանդը: Իր քրոնիկներում նա շատ հաճախ քննում, արժևորում ու գնահատում էր նորեկներին, ճանաչել տալիս նրանց, խրախուսում և ըստ անհրաժեշտության անում դիտողություններ: Այդ իմաստով ուշագրավ են մասնավորապես Շահան Շահնուրին, Զարեհ Որբունուն, Հրաչ Զարդարյանին, Մուշեղ Իշխանին ու նրանց նոր լույս տեսած գոր-

<sup>1</sup> Ա. Չոպանյան, Քրոնիկ, Փարիզ, 1932, թիւ 5-6, էջ 179:

<sup>2</sup> Տե՛ս նաև Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 443:

ծերին նվիրված ուսումնասիրությունները: Գրականագիտական հարուստ փորձն ու մասնագիտական հոտառությունը Չոպանյանին հնարավորություն էին տալիս նորեկ գրողների մեջ նկատել ճշմարիտ ստեղծագործողին և չսխալվել: Եվ իզուր էին ոմանց ջանքերը՝ Չոպանյանին մեղադրելու, թե նա, արագ ոգևորվելով և անտեղի խրախուսելով, հաճախ վնասում է սկսնակներին: Չոպանյանը ջերմ ոգևորությամբ է խոսում նաև Վիլյամ Սարոյանի մասին՝ ազդարարելով մի նոր հայ գրողի ծնունդը<sup>1</sup>:

Հրապարակվող սփյուռքահայ հեղինակների կողքին զուգահեռաբար և գրեթե «Անահիտի» յուրաքանչյուր համարում տպագրվում էին նաև խորհրդահայ գրողների գործեր: Ինքը՝ խմբագրապետը, հավասար ուշադրությամբ հետևում էր ինչպես դասականներին, այնպես էլ խորհրդահայ երիտասարդ ստեղծագործողներին ու արվեստագետներին, հանդես գալիս գրախոսություններով:

Իր ենթադրությունների մեջ, առաջ անցնելով ժամանակից, Չոպանյանը ծրագրեր էր մշակում, առաջարկություններ անում՝ Հայաստանի գրագետներին ու բանաստեղծներին հանձնարարելով ազգային գրականությունը զարգացնելուն զուգընթաց թարգմանել ու հայացնել ռուս, վրաց, պարսից, արաբ, թուրք, թաթար գրականությունների լավագույն էջերը: Խորհ. Հայաստանում ազգային գրականության զարգացման մեծ հեռանկարների հետ էր քննադատը կապում նաև Սփյուռքի գրական-մտավոր ուժերի ապագան: Խորհրդահայ գրական նոր սերնդի դեմքերից Չոպանյանը հատկապես բարձր է գնահատում Գուրգեն Մահարուն, Աբովին, Ալազանին, Ազատ Վշտունուն, Վաղարշակ Նորենցին, Մկրտիչ Արմենին և մանավանդ Եղիշե Չարենցին, վերջիններիս կապակցությամբ հանդես գալիս հակիրճ և ընդարձակ գրախոսություններով: Նորերից քննադատը ուրախությամբ է ողջունում Հովհ. Շիրազի գրական մուտքը, ոգևորված վերջինիս նորատիպ գրքերով՝ գտնում, որ նա այսօր «Երեւանի եւ ամբողջ աշխարհի հայ բանաստեղծներուն մէջ ինքնուրոյն տեղ մը գրաւելու արժանի ներշնչեալ հմայիչ քնարերգակ մըն է»<sup>2</sup>:

\*\*\*

«Անահիտում» էական տեղ էր հատկացված նաև գիտական ամենատարբեր բովանդակությամբ ուսումնասիրություններին: Պատահական չէր, որ Չոպանյանը նոր «Անահիտը» անվանեց «Հանդես մտածման եւ

<sup>1</sup> Տե՛ս Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1947, թիւ 2, էջ 64:

<sup>2</sup> Ա. Չոպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1936, թիւ 5-6, էջ 30:

արուեստի»: Պարբերականի տարբեր համարներում, բացի գրական-բանասիրական ուսումնասիրություններից, տպագրվում էին նաև բնագիտական, պատմագիտական, հոգեբանական, բժշկագիտական և այլ բնույթի հետազոտություններ, տրվում էին բժշկական խորհուրդներ:

Շատ ավելի հարուստ էր արվեստի բաժինը: Թատրոնի, երաժշտության, հոգևոր մշակույթի այլազան բնագավառներին վերաբերող լուրջ նյութերի կողքին վերատպվում էին իտալական Վերածննդի գործիչներից մինչև ժամանակակից ֆրանսիական գեղանկարչության առաջնակարգ հեղինակների գործերը, մատուցվում էին մեծ թվով ցուցահանդեսներ՝ հայ և համաշխարհային արվեստի կերտվածքների, գեղանկարչական արվեստի ու փորագրանկարների լուսանկարներով: Խմբագիրը հիացումով է խոսում Երվանդ Լալայանի, Մանուկ Աբեղյանի, Հակոբ Մանանդյանի, Հրաչյա Աճառյանի, Լեոյի, Գարեգին Հովսեփյանի վաստակի ու նոր գործերի վերաբերյալ, սիյուռքահայ արվեստագետներից ոգևորությամբ նշում գծանկարիչ Մելքոն Քեպապճյանին<sup>1</sup>, օպերային երգիչ Արամ Թոքթայանին, մասնավորապես մեծարանքով գրում ամերիկահայ կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանի<sup>2</sup> և էլի շատերի մասին: Հանդեսի այս բաժինն աշխատակցում էին հայ և համաշխարհային մշակույթի բազմաթիվ ականավոր ու պատկառելի դեմքեր, ինչպես, օրինակ, արվեստաբան Ա. Սազգյանը, բանահավաք-բանագետ Արամ Երեմյանը, Մ. Քեպապճյանը, որը, ի դեպ, վերսկսված «Անահիտի» ճակատագարողերի հեղինակն է՝ բացառությամբ 1948 թ. երկու համարների և 1949 թ. եզակի համարի շապիկների, որոնք գծագրել է փորագրանկարչության խոշորագույն վարպետ Էդգար Շահինը: Վերջինս, որ գծագրել էր նաև «Անահիտ» հանդեսի առաջին շրջանի շապիկը, ևս ակտիվորեն գործակցում էր վերսկսված հանդեսին: Իսկ խորհրդային արվեստի քարոզչությունը «Անահիտի» կարևորագույն խնդիրներից մեկն էր<sup>3</sup>:

Նկատենք, որ «Անահիտը» նաև աչքի էր ընկնում քաղաքական տեսություններով, ոչ միայն ընթացիկ ազգային-քաղաքական, այլև համաշխարհային իրադարձությունների վերաբերյալ գնահատումներով ու վերլուծություններով, մասնավորապես ֆաշիզմի, “գերման ցեղամոլների» քաղաքականության զայրագին քննադատությամբ ու դատապարտմամբ:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Զօպանեան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1929, թիւ 1, էջ 92-94:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 89-92:

<sup>3</sup> Տե՛ս Յու. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 212:

\*\*\*

1937 թ. աղետաբեր տարվանից, երբ ամբողջ Խորհրդային երկիրը սկսեց տնքալ ստալինյան դաժան, մարդատյաց ու ազգահալած քաղաքականության ճնշումների տակ, աստիճանաբար խզվեցին կապերը Սփյուռքի և Խորհ. Հայաստանի միջև: Հայրենիքում այնքան վերելքով սկսված գրական-գեղարվեստական կենսունակ շարժումը սկսեց անկում ապրել: Ամենուր սովորական դարձան քաղաքական ամբաստանություններն ու պարսավանքները: “Կասումի ըոպէ մըն է»<sup>1</sup>, - 1937 թ. ցավով նկատում է Չոպանյանը:

Հայրենիքից եկող լուրերը գնալով դառնում են ավելի տազնապահար: Չոպանյանը մտահոգվում է Բակունցի, Մահարու, Նորենցի և մյուսների ճակատագրով, տազնապում Չարենցի բանտարկության, հետո նաև գնդակահարման մասին հասած կցկտուր, անստույգ լուրերից: Եվ ասես անզոր ստեղծված եղերական կացության հանդեպ՝ Չոպանյանին ուրիշ բան չի մնում անել, քան մաղթել, որ շուտափույթ հաստատվի հայ ժողովրդի համար այնքան պատվաբեր մտավորական գործիչների անտարակուսելի անմեղությունը, և նրանք վերադառնան իրենց գրական ազնիվ աշխատանքին:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Չոպանյանի կապերը Հայաստանի հետ գրեթե լրիվ խզվում են: Շուրջ վեց տարի՝ մինչև 1946 թվականը, ընդհատվում է նաև «Անահիտի» հրատարակումը: Պատերազմից հետո շատ թե քիչ նորոգվում են մշակութային առնչությունները հայրենիքի հետ: Վերլուծելով Խորհ. Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը՝ ծերունագարդ խմբագիրը հայրենիքի հետ մերձեցման նոր հարաբերություններ է փնտրում, հնարավոր տարբերակներ մտածում Հայրենիքի և Սփյուռքի միջև կապերի վերականգնման համար: Սակայն, պետք է ասել, որ այդ տարիներին արդեն Չոպանյանը քիչ բան կարողացավ անել: 1949 թ. ընդմիջտ դադարում է լույս տեսնել «Անահիտ» հանդեսը. վերջին համարը լույս տեսավ այդ թվականի ամռանը: Նախորդ տարվա ընթացքում էլ լույս էր տեսել ընդամենը երկու համար: Գլխավոր պատճառը, ինչպես ինքն է նշում, ոչ թե նյութական միջոցների անբավականությունն էր, այլ ավելի շուտ մի քանի ազգօգուտ կազմակերպություններին իր անդամակցությամբ հայրենակիցներին ծառայություն մատու-

<sup>1</sup> Ա. Չոպանյան, Քրոնիկ, «Անահիտ», Փարիզ, 1937, թիւ 1-2, էջ 106:

ցելու անձնվեր ծանր աշխատանքը, որը սպառում էր նրա ուժերը<sup>1</sup>:

Սակայն, պետք է նկատել, որ նյութական խնդիրներն էլ քիչ չէին: Չոպանյանը հաճախ էր դժգոհում բաժանորդներից բաժնեգները կանոնավոր չվճարելու պատճառով: Իսկ նրանց, ովքեր երբեմն դժգոհում կամ գանգատվում էին «Անահիտի» ոչ կանոնավոր, երբեմն ուշացած հրատարակումներից կամ թվերի կցումից, խմբագրապետը դեռ 1931 թ. տվել էր մի պատասխան, որը խիստ բնութագրական է գալիս հանդեսի ողջ գործունեությանը. «...միանգամ ընդ միշտ ըսենք որ մենք տպագրուած թղթի վաճառական չենք...»<sup>2</sup>:

\*\*\*

Ամփոփելով նկատենք, որ վերածնված «Անահիտը» ըստ էության իրականացրեց այն խնդիրները, որոնք պարբերականի առջև դրել էր Արշակ Չոպանյանը: Գրականության, արվեստի, ընդհանարպես հայ և համաշխարհային մշակույթի քարոզը, հասարակական ամենատարբեր հարցերի վերլուծությունը, ժամանակի քաղաքական հարաբերությունների լուսաբանումը նպաստեցին սփյուռքահայ ընթերցողների հայացքների ձևավորմանն ու զարգացմանը: Մասնավորապես սփյուռքահայ գրականության առաջընթացի գործում մեծ եղավ «Անահիտի» դերը: Սակայն, անգնահատելի եղավ հանդեսի ու նրա խմբագրի ծառայությունը սփյուռքահայությանը մայր հայրենիքի նկատմամբ սիրո ու նվիրվածության ոգով դաստիարակելու գործում<sup>3</sup>:

***Քանալի բառեր**<sup>1</sup> Արշակ Չոպանյան, «Անահիտ» հանդես, երկրորդ շրջան, ազգային, գրական-գեղարվեստական, մշակույթ, գրական կապեր, եկեղեցի, ավանդներ, Խորհրդային Հայաստան, Սփյուռք:*

<sup>1</sup> Տե՛ս Ա. Չոպանեան, «Անահիտ»ի ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1948, թիւ 2, էջ 44:

<sup>2</sup> Ա. Չոպանեան, Երկու խօսք մեր ընթերցողներուն, «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 1-2, էջ 191:

<sup>3</sup> Տե՛ս նաև Կ. Դալլաքյան, նշվ. աշխ., էջ 418-419:

## АРШАК ЧОБАНЯН И ВТОРОЙ ПЕРИОД ЖУРНАЛА «АНАИТ»

*Вачаган Авагян*

**Ключевые слова:** Аршак Чобанян, журнал «Анаит», второй период, национальный, литературно-художественный, культура, литературные связи, церковь, традиции.

Журнал «Анаит», основанный Аршаком Чобаняном (1872-1954) в Париже, имел два периода издания - первый в 1898-1911 гг., второй - в 1929-1941 и 1946-1949 гг.. Однако если деятельность первого периода «Анаит» стала предметом отдельного исследования, то второй период журнала еще не был изучен.

В данной статье целью автора была кратко представить основные аспекты второго периода деятельности «Анаит», оценить его с национальной, социальной и эстетической точки зрения, а также сделать наглядными различные эпизоды и страницы, связанные с разнообразной деятельностью главного редактора журнала в этот период.

## ARCHAG TCHOBANIAN AND THE SECOND PERIOD OF “ANAHIT” MAGAZINE

*Avagyan Vachagan*

**Key words:** Archag Tchobanian, “Anahit” magazine, second period, national, literary and artistic, culture, literary ties, church, traditions.

“Anahit” magazine, founded by Archag Tchobanian (1872-1954) in Paris, had two periods of publication - the first one in 1898-1911, and the second one in 1929-1941 and 1946-1949. However, if the activity of the first period of “Anahit” has become the subject of a separate study, magazine’s second period has not been studied yet.

In current article the author’s aim was to present briefly the main aspects of the second period of “Anahit,” to give its national, social and aesthetic assessment, as well as to make visible the various episodes and pages related to the diverse activities of the magazine’s editor-in-chief during that period.

**Վաչագան Ավագյան**, ք. գ. թ., դոցենտ, ԵՊՀ, հայ բանասիրության ֆակուլտետ, ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության սմբիոն

Հեռ.՝ 094-57-75-67

Էլ. փոստ՝ vachagan.avagyan@ysu.am